



Մ.Օ՝ Բրայան, Թ. Հոթեն, Ա. Վան դեն Բորն

Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասներին

(մեթոդական ձեռնարկ իրավապահ մարմինների
աշխատակիցների համար)



Երևան
«Լուսաբաց հրատարակչատուն»
2012

ECPAT Europe Law Enforcement Group

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ Մ.Օ՛Բրայան, Թ.Յոթեն, Ա. Վան դեն Բորն

Խնբագիր՝ Մ.Օ՛Բրայան

Հակազդում երեխաների թրաֆիքինգին

© ECPAT Europe Law Enforcement Group. 2006;

© Defence for Children International the Netherlands, 2006;

© ECPAT International, 2006.

ББК 88.4

П95

Թարգմանիչ Ա. Խաչատրյան

Մասնագիտական խնբագրեր՝ Դ. Թունասյան, Ա. Ղամբարյան



Ձեռնարկի մասին

Ստորև ներկայացված նյութը Միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպական իրավապաշտպան կազմակերպության խմբի (ECPAT Europe Law Enforcement Group), «Փրկենք երեխաներին Նիդերլանդներում» (Defence for Children International the Netherlands) և ECPAT International-ի մասնակցությամբ մշակված «Հակազդում երեխաների թրաֆիքինգին» ձեռնարկի մի հատվածն է: Ձեռնարկի հեղինակներն ու կազմողներն են՝ Սուրեն Օ'Բրայանը, Թեո Նոթենը և Անկե վանդեն Բորնը:

ECPAT International-ը երեխաների թրաֆիքինգի և սեռական շահագործման դեմ պայքարող համաշխարհային ցանց է, որը միավորում է 60 երկրներում գործող ավելի քան 69 խումբ և անհատ անդամներ:

2006թ.-ին ECPAT International-ի կողմից հրատարակվել է «Հակազդուժ երեխաների թրաֆիքինգին» մեթոդական ձեռնարկը, որը նախատեսված է իրավապահների, սոցիալական ծառայությունների և երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող այլ մասնագետների համար:

Ձեռնարկի պատրաստման շարժառիթ հանդիսացել է անբավարար ու ոչ պատշաճ ուշադրությունը թրաֆիքինգի ենթարկված անչափահասների նկատմամբ, շատ երկրներում նրանց տրամադրվող խնամքի և պաշպանության պակասը: Իրավապահ մարմիններում և սոցիալական պաշտպանության ոլորտում աշխատող մասնագետները հաճախ չեն պատկերացնում երեխաներին թրաֆիքինգի ենթարկելու հետևանքներն ու առանձնահատկությունները և չգիտեն ինչպես աշխատել նրանց հետ: Այս ամենը հիմք է հանդիսացել եզրակացնելու, որ անհրաժեշտ է ուսումնասիրել թրաֆիքինգի ենթարկված անչափահասների հետ վարվեցողության կարգը, որի հիմքում պետք է լինի երեխայի իրավունքների պաշտպանությունը: Այդ նպատակով նախապատրաստվել են դասավանդման նյութեր անչափահաս տուժողի մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունների առանձնահատկությունների մասին: Ամփոփված նյութերը քննարկվել են միջազգային փորձագիտական խմբի կողմից 2005թ.-ին Բուլղարիայում կայացած համաժողովի ժամանակ: Փորձագիտական խումբը բաղկացած էր

նստիկաններից, դատախազներից, սոցիալական պաշտպանության ու երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մասնագետներից: Նույն տարում կազմակերպվել է առաջին ուսուցողական սեմինարը, որի ժամանակ ներկայացվել են պատրաստված նյութերը և դրա հիման վրա կատարվել են փոփոխություններ և լրացումներ: 2006թ.-ին այդ դասավանդման նյութերի հիման վրա 10 երկրում կազմակերպվել են սեմինարներ: Այդ սեմինարներին ներկայացված դասավանդման նյութերի հիման վրա նախապատրաստվել է «Հակազդում երեխաների թրաֆիքինգին» ձեռնարկը, որը թարգմանվել է մի շարք լեզուներով:

Նպատակ ունենալով նպաստել ՀՀ-ում երեխաների թրաֆիքինգի դեմ իրականացվող պայքարին՝ «Հույս և օգնություն» ՀԿ նպատակահարմար է գտել նախապատրաստել և հրատարակել «Հակազդում երեխաների թրաֆիքինգին» ձեռնարկից կարևորագույն հատվածներից մեկը՝ «Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասներին» գլուխը:

Մասնագետների դրական արձագանքի դեպքում կկազմակերպվի ամբողջ ձեռնարկի թարգմանությունը հայերեն լեզվով և հրատարակումը:

Ե. Շատվորյան

«Հույս և օգնություն» ՀԿ նախագահ



Ներածություն

Տուժողի ցուցմունքները հանդիսանում են ապացույցների տեսակներից մեկը և կարևորվում են ինչպես բուժանդակությամբ, այնպես էլ քննչական ու դատավարական հետագա գործողությունների պլանավորման համար: Տուժողի ցուցմունքները՝ մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում օրենքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են:

Անչափահասի հարցաքննությունն ունի որոշակի առանձնահատկություններ (տևողություն, ներկա գտնվող անձինք և այլն), որոնք ամրագրված են գործող օրենսդրությամբ, բայց պակաս կարևոր չէ նաև երեխայի հարցաքն-

նության տակտիկա-մեթոդական առանձնահատկությունները, ինչը պայմանավորվում է երեխայի հարցաքննության արդյունքների օգտագործումը քրեական գործի շրջանակներում:

Հարկ է նշել, որ և՛ ազգային, և՛ միջազգային օրենսդրության համաձայն՝ անչափահաս/երեխա է համարվում 18 տարեկան չլրացած յուրաքանչյուր անձ¹:

Անչափահասների տարբեր տարիքային խմբեր յուրովի են ընկալում շրջապատող աշխարհը, նրանում կատարվող դեպքերն ու իրադարձությունները, հետևաբար տարբեր են նաև այդ դեպքերին և իրադարձություններին տրվող գնահատականը:

Քննության օբյեկտիվությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի քրեական գործով վարույթն իրականացնող պաշտոնատար անձը տիրապետի ոչ միայն համապատասխան իրավական գիտելիքներին, այլ նաև հստակ պատկերացում ունենա անչափահասի հոգեկան և

¹ Երեխայի իրավունքների մասին 1989թ.-ի կոնվենցիայի 1-ին հոդվածը, Սարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005թ.-ի ԵԽ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի “դ” կետը, ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան լրացնող՝ 2000թ.-ի Սարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման և խափանման և դրա համար պատժի մասին արձանագրության 3-րդ հոդվածի “դ” կետը, Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 1999թ.-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածը, Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասը, “Երեխայի իրավունքների մասին” 1996թ.-ի մայիսի 29-ի ՀՀ օրենքի 1-ին հոդվածը և այլն:

հոգեբանական վիճակի մասին՝ հաշվի առնելով նրանց տարբեր տարիքային խմբերի առանձնահատկությունները:

Երաշխավորելով անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական գործի քննության ընթացքում՝ ՀՀ-ը իրականացնում է այս ոլորտում ստանձնած միջազգային պարտականությունները:

Երեխայի իրավունքների երաշխիք ասելով պետք է հասկանալ այն իրավական միջոցները, որոնք ապահովում են երեխայի ցանկացած իրավունքի իրացումը, որն առաջնահերթ կարող է ապահովվել այն դեպքում, երբ այդ իրավունքին համապատասխանում է ինչ-որ մեկի պարտականությունը: Հետևաբար, երեխայի իրավունքներին համապատասխանում է պետության պարտականությունը, որի գործնական իրացումը միայն կարող է իրական երաշխիք հանդիսանալ երեխայի իրավունքների ապահովման համար: Քննարկվող հարցի տեսանկյունից պետության այս պարտականությունը դրված է առաջնահերթ քննիչների վրա:


«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը սահմանում է երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:

Իհարկե, այդ օրենքը չի կարգավորում անչափահասի մասնակցությամբ կատարվող քննչական և այլ դատավարական գործողությունների առանձնահատկությունները, բայց տալիս է այն ելակետային դրույթները, որոնք պարտադիր են երեխայի հետ աշխատող ցանկացած անձի համար:

Այս ձեռնարկում ներկայացված են անչափահասների հարցաքննության ընթացքում կիրառվող որոշ առանձնահատկություններ և բերված են անչափահասների հարցաքննության միջազգայնորեն ճանանչված լավագույն փորձը: Ինչպես նաև ներկայացված է ՀՀ իրավակիրառ պրակտիկայում անչափահասների մասնակցությամբ կատարվող որոշ քննչական գործողությունների առանձնահատկությունները:

Դավիթ Թումասյան

Իրավաբան



Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասին

1. Թրաֆիքինգի ենթարկված անչափահասները շահագործողների ձեռքբերում բռնության խիստ դրվագներ են վերապրել: Արդյունքում նրանց առողջությունը կարող է բավականին վատթարանալ՝ անգամ հանգեցնի հետվնասվածքային սթրեսային համախտանիշի առաջացմանը: Դա կարող է այնքան ծանր անդրադառնալ երեխաների վարքագծի վրա, որ նրանք ի վիճակի չլինեն պատասխանել հարցերին՝ սովորական իրավիճակում այլ տարեկիցների նման: Անչափահաս տուժողը կարող է.

- դիմագրկել բռնության փորձը, և այն վերարտադրել երրորդ դեմքով, կարծես դա տեղի է ունեցել մեկ ուրիշի հետ,

- չհիշել, թե որտեղ է եղել և ինչ է կատարվել նրա հետ,

- անտարբեր և չհետաքրքրված թվալ կամ «համրացած» լինել,

- տառապել կատարվածի հիշողություններից և խորապես դժբախտ լինել,

- հուզականորեն կապված լինել բռնություն գործադրողի հետ և ձգտել պաշտպանել նրան,

- վախեցած կամ խուճապի մատնված լինել:

2. Շահագործումից տուժած անչափահասների վերականգնումը և ապաքինումը երկարատև և բարդ գործընթաց է, որը պահանջում է և՛ ժամանակ, և՛ մասնագիտացված աջակցություն: Այդ շրջանում նրանք կարող են թշնամաբար վերաբերվել իրենց փրկող անձանց, նրանց համար դժվար կլինի վստահել մարդկանց և ինտեգրվել նոր միջավայր: Ինչքան ավելի քիչ է շահագործողի հետ առնչվելու հավանականությունը և մեծ է հարցաքննության միջև ընկած ժամանակահատվածը, այնքան ավելի ապահովված ու պաշտպանված է զգում իրեն անչափահասը, և նա կկարողանա պատմել իր ապրումների և իրողության մանրամասները:

3. Անչափահասը կարող է վախենա շահագործողի սպառնալիքներից, որ իր ընտանիքի անդամներին վնաս կպատճառեն կամ վախենա, որ իր ընտանիքը կամաչի իր

հետ կատարվածի համար և կիրառարվի իրենից: Անչափահասը կարող է վախենալ իրեն որևէ հանցագործության մեջ մեղադրելու հանգամանքից:

4. Անչափահաս տուժողը կարող է հերքել, որ ինքը ենթարկվել է թրաֆիքինգի/շահագործման, գուցե նույնիսկ չկարողանա պարզորոշ տեղեկություններ հայտնել կամ իր ցուցմունքներում լինի ոչ հետևողական և հակասական:

5. Մեծահասակներին առաջարկվող աջակցության տարբերակները, օրինակ՝ ժամանակավոր կացարան տրամադրելը, չի կարելի առաջարկել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասներին՝ մասնավորապես, երբ դա իրականացվում է ցուցմունք տալուն խրախուսելու համար: Չի կարելի վտանգել երեխայի անվտանգությունը՝ մեղադրանքի նախապատրաստման նպատակով:

6. Քննությունն իրականացնող իրավապահ մարմինների աշխատակցին անհրաժեշտ է.

- որոշել, թե արդյոք, անչափահասը թրաֆիքինգի/շահագործման տուժող է,
- որոշել, արդյոք, անձի 18 տարեկանը չի լրացել, և նա կճանաչվի թրաֆիքինգի/շահագործման վերաբերյալ քրեական գործով տուժող,
- պարզել, թե արդյոք, թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասը դատավարական տեսանկյունից «պոտենցիալ օգտակար վկա» է շահագործողի դեմ հարու-

ցած գործում և, արդյոք, նա ի վիճակի է անհրաժեշտ ցուցմունքներ տալ,

- տալ թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասի, նրա ընտանիքի և մերձավորների անվտանգության ռիսկի գնահատականը՝ նրանց պաշտպանությանն ուղղված միջոցներն ապահովելու համար: */Գնահատականը պետք է սահմանի, թե արդյոք, անչափահասին վտանգ սպառնում է և դատաքննության ընթացքում, և դրանից հետո՝ նրա ծննդավայրում, նպատակակետ երկրում կամ երրորդ երկրներում/*

- առաջնահերթություն տրվի «երեխայի լավագույն շահերին»: Այս դեպքում կարելի է հետաձգել անչափահասի հարցաքննությունը, եթե անչափահասի շահերից ելնելով՝ անհրաժեշտ է նրան անհապաղ տեղափոխել ծննդավայր կամ վերամիավորել ընտանիքի հետ:

7. Հարցաքննության անցկացման ուղեցույց

Քրեական գործի քննության ընթացքում անչափահասի հարցաքննությունը պահանջում է հատուկ հմտություն, այդ իսկ պատճառով հարցաքննությունը պետք է վարեն վերապատրաստում անցած աշխատակիցները: */Այս բաժնում տրամադրված տեղեկությունը չպետք է դիտարկվի որպես վերապատրաստման համարժեք հանձնարարական/*: Եթե, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասին, ապա հարցաքն-

նությանը նախապատրաստվելիս պետք է պահպանել հետևյալ հրահանգները.

- հարցաքննության ժամանակ ապահովեք անչափահասին աջակցող անձի² ներկայությունը: Դա կարող է լինել նաև ազգականը, բայց միայն այն դեպքում, եթե կասկած չկա, որ նա որևէ կերպ առնչվում էր կամ ներգրավված էր երեխայի դեմ հանցագործության կատարմանը: Դա կարող է լինել նաև սոցիալական աշխատողը կամ այն անձը, որն աջակցել է անչափահասին՝ շահագործողից ազատվելու պահից: Հնարավորության դեպքում պետք է նշանակվի խնամակալ³,

² ՀՀ գործող օրենսդրությունը չի նախատեսում աջակցող անձի հասկացությունը, այն նախատեսված է միջազգային ակտերով: ՀՀ-ում այդ անձանց գործառույթները փոստացի իրականացնում են տուժող երեխայի օրինական ներկայացուցիչը, ներկայացուցիչը, մանկավարժը, ուսուցիչը:

³ ՀՀ քրեական դատարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն տուժողն իրեն պատկանող իրավունքներից օգտվում և իր վրա դրված պարտականությունները կատարում է անձանք կամ ներկայացուցչի միջոցով, եթե դա համապատասխանում է համապատասխան իրավունքների և պարտականությունների բնույթին, իսկ Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

Որպես տուժողի օրինական ներկայացուցիչներ կարող են հանդես գալ նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը: Օրինական ներկայացուցիչ չունենալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբար-

- եթե անչափահաս տուժողը օտարերկրացի է և չի հասկանում կամ չի տիրապետում հայերենին, ապահովեք թարգմանչի մասնակցությունը ով կիրականացնի մատչելի թարգմանություն,

- հարցաքննության ընթացքում կարևորվում է նաև քննիչի և թարգմանչի սեռը. տղամարդու կողմից սեռական և/կամ ֆիզիկական բռնության ենթարկված անչափահասը իրեն ավելի անվտանգ կզգա կնոջ ներկայությամբ: Սակայն երբեմն անչափահասները /ներառյալ՝ աղջիկները/ նախընտրում են զրուցել տղամարդկանց հետ: Հաճախ երեխայի համար ավելի հեշտ է շփվել տղամարդու հետ, քանի որ վերջինիս նա ընկալում է որպես պաշտպանի: Հետևաբար, հարցաքննությանը պետք է միաժամանակ ներկա գտնվեն և՛ տղամարդիկ, և՛ կանայք,

- խուսափեք անչափահասի մասնակցությամբ մի քանի հարցաքննությունների կատարելուց: Եթե հնարավոր է, կազմակերպեք միայն մեկ հարցաքննություն և դրա նախապատրաստման մեջ ներգրավեք բոլոր շահագրգիռ մարմիններին: Միջոցներ ձեռնարկեք, որ անչափահասը չվախենա ներկա գտնվողների քանակից, սակայն պակաս կարևոր չէ հանոզվել, որ անչափահասը չի ենթարկվի մի քանի հարցաքննությունների և կրկին չի վերապրի բռնության հետ կապված ապրումներն ու տառապանքները: Հարցաքննութ-

ծության մարմնին, այսինքն այդ հարցող զբաղվում է տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան ծառայությունը:

յան բոլոր մասնակիցները պետք է հստակ տիրապետեն իրենց գործառույթներին,

- կիրառեք միայն պարզ արտահայտություններ՝ նկատի ունենալով անչափահասի տարիքը, հասունությունը և մտավոր զարգացումը: Օգտվեք այն բառապաշարից, որը հասկանալի է երեխային և համապատասխանում է նրա զարգացման մակարդակին,

- ոչ մի դեպքում հարցաքննությանը չպետք է ներկա գտնվի հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ նրա հետ կապ ունեցող անձը,

- անչափահասին պետք է զերծ պահել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ շփումից,

- հնարավորության դեպքում հարցաքննությունը պետք է տեսաձայնագրվի կամ, ծայրահեղ դեպքում, ձայնագրվի /կամ օգտագործվի էլեկտրոնային այլ սարքավորում/: Հարցաքննությունը արձանագրելու դեպքում հանոզվեք, որ ամեն ինչ ճիշտ է գրված՝ յուրաքանչյուր պատասխանի վերջում համեմատելով այն երեխայի պատասխանի հետ:

Ստորև ներկայացված է թափառաշրջիկ երեխաների խնդիրներով զբաղվող Կոնսորցիումի ուղեցույցից վերցրած մի սխեմա, որտեղ նշվում է հարցաքննության ժամանակ անչափահասների հետ խոսելու ոճը:

Խուսափեք՝	Օգտագործեք՝
<p>1/ երկար նախադասություններից,</p> <p>2/ բարդ նախադասություններից,</p> <p>3/ կրավորական սեռից /«Ի՞նչ է արվել քո կողմից:»/,</p> <p>4/ ժխտական նախադասություններից /«Դու նրան չե՞ս ասել:»/,</p> <p>5/ բազմիմաստ հարցերից,</p> <p>6/ կրկնակի ժխտումից /«Մայրիկդ չի՞ ասել քեզ, որ փողոց դուրս չգաս:»/,</p> <p>7/ հռետորական հարցերից /«Եթե հոգնես, ասա:»/:</p>	<p>1/ համառոտ նախադասություններ,</p> <p>2/ պարզ նախադասություններ,</p> <p>3/ ներգործական սեռը /«Ի՞նչ ես արել:»/,</p> <p>4/ ոչ ժխտական նախադասություններ /«Դու նրան ասացի՞ր:»/,</p> <p>5/ միայն մեկ իմաստ ունեցող հարցեր,</p> <p>6/ մեկ ժխտում /«Մայրիկդ ասե՞լ է քեզ, որ փողոց դուրս չգաս:»/,</p> <p>7/ ուղիղ հարցեր /«Դու հոգնե՞լ ես:»/:</p>

Անչափահասի հարցաքննության ժամանակ կարող է կիրառվել նաև ակտիվ ունկնդրության տեխնիկան, որի հիմքում ընկած է այն գաղափարը, որ երեխան կշարունակի պատմել իր պատմությունը, եթե նկատի, բառերով կամ առանց բառերի արտահայտված քաջալերանք: Դրան կարելի է հասնել՝ կրկնելով երեխայի արտասանած նախադասությունները:

Օրինակ. *Երեխա*. Նա խփեց դեմքիս:

Հարցաքննող. Նա խփեց դեմքի՞դ:

Երեխա. Այո, դա սարսափելի էր: Դեմքս ցավում էր: Ես լաց էի լինում:

Չարցաքննող. Դեմքդ ցավում էր, դու վա՞տ էիր զգում:

Սակայն հարցաքննողը պետք է չափազանց զգույշ լինի և չօգտագործի իր հարցերում այնպիսի զգացմունք կամ իրադարձության հիշատակում, որը երեխան չի արտահայտել, հակառակ դեպքում, դա կարող է նվազեցնել հարցաքննության ապացուցողական արժեքը:

8. Չարցաքննության անցկացման վայրը

Չարցաքննության կատարման վայրը կարևոր ազդեցություն ունի երեխայի՝ հարցերին պատասխանելու ունակության վրա:

Կատարյալ տարբերակը հետևյալն է.

- հարմարավետ և հաճելի՝ անչափահասի և իրավապահ մարմինների աշխատակիցների համար,

- անչափահասի համար գրավիչ՝ մանկահասակների համար այդտեղ պետք է լինեն տիկնիկներ, խաղալիքներ, նկարչական տետրեր և մատիտներ, մյուսների համար՝ գունազարդ կահույք, գրքեր, հեռուստացույց և այլն.

- հանգիստ վայր:

Եթե ուստիկանության բաժանմունքում չկա համապատասխան սենյակ, անհրաժեշտ է պայմանավորվել երեխաներին օգնություն/աջակցություն տրամադրող կենտրոնի

/հասարակական կազմակերպության/ հետ, որպեսզի հարցաքննությունն անց կացվի նրանց սենյակներից մեկում: Եթե սենյակում տեղադրված է միակողմանի հայելի, ապա հարցաքննությանը կարելի է հետևել հակառակ կողմից և տեսաձայնագրել այն:

9. Հարցաքննության նախապատրաստում

Հարցաքննությունը ներառում է նաև անչափահասի անցյալի վերաբերյալ լրացուցիչ տեղեկության հավաքում:

Անչափահասի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ նրանից: Այս դեպքում սոցիալական և կենսագրական տվյալներ ստանալու համար պետք է անցկացնել նախնական ոչ պաշտոնական հարցազրույց: Իրավապահ մարմինների աշխատակցին նման տեղեկատվությունը կօգնի ոչ միայն գործի քննության մեջ անչափահասի դերը որոշելու, այլ նաև հարցաքննության ժամանակ անչափահասի հետ շփում /կոնտակտ/ հաստատելու հարցում:

Հանցագործության հանգամանքների ամբողջական քննությունն ապահովելու նպատակով՝ հարցաքննության ընթացքում տրվող հարցերը պետք է կազմված լինեն նախապես: Իրավապահ մարմինների աշխատակիցը պետք է նաև տեղյակ լինի, թե անչափահասի պաշտպանության համար ինչ միջոցներ են ձեռնարկվելու կամ արդեն իսկ ձեռնարկվել են, և մոտ ապագայում ինչ է կատարվելու վերջինիս հետ: Աշխատակիցը պետք է պատրաստ լինի պատաս-

խանել անչափահասի ցանկացած հարցին՝ մասնավորապես նրա ապագայի ու անվտանգության վերաբերյալ:

10. Ինչպես չչփոթեցնել և չվախեցնել անչափահասին

Չարցաքննության ժամանակ պետք է միջոցներ ձեռնարկել անչափահասին չչփոթեցնելու և չվախեցնելու համար: Դրա համար քննիչը պետք է՝

- հարցաքննության ողջ ընթացքում լինի հանգիստ և բարեհամբյուր: Չետաքրքրված և մտահոգված լինի անչափահասի հոգսերով, նրա հետ խոսելիս՝ նստի նրա դիմաց, հայացքը՝ անչափահասի աչքերի մակարդակի վրա,

- աշխատի չխոժոռվել, չկատարել մարմնի այնպիսի շարժումներ, որոնք բացասական վերաբերմունք են արտահայտում,

- հիշի անչափահասի հիմնական պահանջների բավարարման մասին, նրա բնական կարիքները հոգալու նպատակով ընդմիջի հարցաքննությունը. անչափահասը չպետք է երկար ժամանակ անշարժ և/կամ լարված նստած լինի,

- անչափահասի վերաբերյալ հայտնի ցանկացած լրացուցիչ տեղեկությունն օգտագործի այնպես, որ թրաֆիքինգի/ շահագործման մանրամասները բացահայտելիս, անչափահասը իրեն զգա հարմարավետ և ապահով,

- հոգատար վերաբերմունք ցուցաբերի անչափահասի նկատմամբ, բայց աշխատի չկպնել նրան: Միայն աջակցող

անձը/ օրինական ներկայացուցիչը կարող է գրկել անչափահասին, եթե նա հուզված է,

- անչափահասին պարզաբանի, որ հարցաքննությունը ձայնագրվում է, և որ ցանկալի է խոսել դանդաղ ու հստակ,

- ներկայացնի հարցաքննությանը ներկա գտնվող այլ անձանց և բացատրի նրանց գործողությունները⁴,

- ազնվորեն հայտնի հարցաքննության անցկացման պատճառների և քրեական հետապնդման նպատակի մասին՝ օգտագործելով անչափահասի տարիքի համար հասկանալի բառեր և արտահայտություններ,

⁴ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի համաձայն անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը, անկախ տարիքից, կարող է հարցաքննվել՝ պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ: Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը: Հարցաքննությունը սկսելուց առաջ օրինական ներկայացուցչին բացատրվում են հարցաքննությանը ներկա գտնվելու, քննիչի թույլտվությամբ իր դիտողությունները շարադրելու և հարցեր տալու իր իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Քննիչն իրավունք ունի չընդունելու տրված հարցերը, սակայն դրանք պետք է ներառվեն արձանագրությունում: Տասնվեց տարին չլրացած վկային կամ տուժողին բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին:

- չդատապարտի կամ որևէ դժգոհություն չարտահայտի, երբ անչափահասը պատմում է իր դեմ կատարած բռնության կամ շահագործման մասին,

- իր հետ զրուցելու դիմաց ոչինչ չառաջարկի անչափահասին,

- չընդհատի անչափահասին, բացառությամբ՝ նրա ասածը ճշտելու նպատակով, աշխատի չտալ հուշող հարցեր: Թույլ տա, որ անչափահասը պատմի իրողությունն այնպես, ինչպես հարկ է համարում,

- միաժամանակ մեկ հարցից ավել չտա, միայն հարցի պատասխանը ստանլուց հետո անցնի հաջորդ հարցին,

- չտա «ինչու՞»-ով սկսվող հարցեր, քանի որ անչափահասի մոտ դրանք առաջացնում են շահագործման ենթարկվելու մեղքի զգացում,

- պարզաբանի անչափահասին, թե անվտանգության ինչպիսի երաշխիքներ են նախատեսված, և թե ինչ տեղի կունենա հարցաքննության ավարտից հետո: Այսինքն, բացատրի նրան, թե մոտավորապես երբ կկայացվի մեղադրական դատավճիռ, անչափահասի դերն այդ գործում և անվտանգության այն միջոցները, որոնք ձեռնարկվում են թրաֆիքինգի/շահագործման կազմակերպիչների ու կատարողների կողմից անչափահասին կրկնակի հանցագործության մեջ ներգրավելուց պաշտպանելու համար,

- բացատրի անչափահասին, որ նրան չեն կարող հարկադրել ցուցմունք տալ, եթե ինքը չի ցանկանում⁵: Անչափահասին կարելի է բացատրել նաև հարցաքննության ժամանակ ստացված տեղեկության անհրաժեշտությունն ու արժեքը,

- թույլ տա անչափահասին տալ կարևոր թվացող ցանկացած հարց,

- անչափահասի համար կրկնի նրա ցուցմունքները՝ օգտագործելով հասկանալի բառեր, և հնարավորություն տա անել ավելացումներ կամ պարզաբանում,

- եթե անչափահասը օտարերկրացի է, պարզի, թե արդյոք նա ցանկանում է վերադառնալ իր երկիր և ընտանիք: Պարզի անչափահասի նախասիրությունները և անցյալը, բայց ոչ մի խոստում չտա ապագայի վերաբերյալ: Հանդգլի, որ անհրաժեշտության դեպքում անչափահասի համար կնշանակվի խնամակալ:

11. Տարիքը որոշելու ցուցումներ⁶

Հաճախ դժվար է որոշել, թե արդյոք, Ձեր առջև նստած անձն անչափահաս է, թե՛ ոչ:

⁵ ՀՀ-ում այս դրույթը կիրառելի է 16 տարին չլրացած անչափահասների նկատմամբ, քանի որ 16 տարին լրացած տուժողի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը կառաջացնի քրեական պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի 339-րդ հոդվածով: Քրեական պատասխանատվությունից ազատվում է նաև իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձը:

⁶ Երեխայի տարիքը որոշելու օբյեկտիվ ցուցանիշը հանդիսանում է դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը:

- Հարցրեք նրան՝ քանի տարեկան է:

- Եթե նա չգիտե, կամ Դուք չեք հավատում նրա պատասխանին, տվեք այնպիսի հարցեր, որոնք կօգնեն որոշել նրա մոտավոր տարիքը: Օրինակ, «Դու հիշու՞մ ես....», «Դու ծնվել ես ա՞յն տարի, երբ....», «Դու դպրոցու՞մ էիր այն բանից առաջ, երբ....»

- Որոշումը կայացրեք՝ Ձեզ ծանոթ անչափահասների հետ համեմատելով:

- Եթե երկնտում եք, վարվեք ինչպես անչափահասի հետ:

- Եթե շփվում եք անչափահասի ծնողների/ խնամակալների հետ, խնդրեք նրանց, որ հնարավորության դեպքում բերեն անչափահասի անձը հաստատող փաստաթղթեր:

12. Անչափահաս տուժողի կամ վկայի⁷ նախապատրաստումը դատավարությանը

Եթե որոշում է կայացվել քրեական գործով անչափահասին ներգարվել որպես տուժող կամ վկա, և վերջինս պետք է

⁷ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածի համաձայն անչափահաս վկայի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի ցուցմունքները, նրան հնարավորություն է ընձեռվում տվյալ վկային տալ հարցեր և ցուցմունքներ՝ վկայի հաղորդած տվյալների վերաբերյալ: Տասնվեց տարին չլրացած վկան պետք է հեռացվի դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի հետագա ներկայությունը:

ցուցմունքներ տա, ապա անհրաժեշտ է անցկացնել համապատասխան նախապատրաստական աշխատանք: Իրավապահ մարմինների աշխատակիցը պետք է կատարի հետևյալ գործողություններ.

- հարցաքննության օրվա և ժամի մասին տեղեկացնի անչափահասին, նրա ծնողներին, խնամակալին կամ այն մասնագետին, որն օգնություն է տրամադրում. հանոզվի, որ աջակցող անձը և խնամակալը կարող են մանսակցել անչափահասի հարցաքննությանը⁸,

- եթե հնարավոր է, ապահովի անչափահասի ցուցմունքի տեսագրումը անվտանգ տեղից՝ աջակցող անձի և/կամ խնամակալի ներկայությամբ,

- եթե ցուցմունքը տեսագրվում է, բացատրի անչափահասին, թե ինչպես է դա կատարվում,

- եթե անչափահասը անձամբ պիտի ներկա լինի դատավարությանը, ապա մինչև հարցաքննության օրը, նրան

⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն 14 տարին չլրացած վկայի օրինական ներկայացուցիչը, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ նաև առավել բարձր տարիքի անչափահասի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի իմանալ ներկայացվող անձին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը՝ ուղեկցելով նրան: Այս դրույթի համաձայն 14-18 տարեկան անչափահաս վկաների օրինական ներկայացուցչի մասնակցությունը քննչական կամ այլ դատավարական գործողությանը ամբողջությամբ պայմանավորված է վարույթն իրականացնող մարմնի կամքից, որը որոշակի հակասության մեջ է գտնվում միջազգային չափարոշիրների հետ:

պետք է բերի հարցաքննության սենյակ/դատավարության դահլիճ և ցուցադրի այն,

- հնարավորություն տա անչափահասին նստել ցուցմունքներ տալու համար նախատեսված տեղում և, քանի դեռ նա այնտեղ է, զրուցի նրա հետ, որպեսզի անչափահասը վարժվի այդ իրադրության մեջ շփմանը,

- ցույց տա անչափահասին դատաքննության ժամանակ դատավարության մասնակիցներից յուրաքանչյուրի նստելու տեղը. եթե հնարավոր է, մինչև դատաքննությունն անչափահասին ծանոթացնի դատախազի հետ,

- անչափահասին բացատրի դատավարության մասնակիցների՝ դատավորի, դատախազի, պաշտպանի, նիստերի քարտուղարի և այլ մասնակիցների գործառույթները,

- բացատրի անչափահասին, որ հանցագործը ևս ներկա է լինելու դատավարությանը, թե ինչու է նա այդտեղ լինելու, և անվտանգության ինչ միջոցներ են ձեռնարկվելու, որպեսզի հանցագործը չփախչի կամ չվնասի նրան,

- բացատրի անչափահասին, թե ինչ հարցեր են տալու նրան, և թե ինչպես նա կարող է պատասխանել դրանց, օրինակ՝ կարող է մտածել, թե ինչ պատասխանել, խնդրել պարզաբանել հարցը, եթե այն հասկանալի չէ, պատասխանել միայն տրված հարցին և այլն,

- բացատրի անչափահասին, թե ինչ կարող է տեղի ունենալ խաչաձև հարցաքննության ժամանակ և կարողանա

պարզաբանել նրան, որ գործով նա հանդես է գալիս որպես տուժող:


ՉԻՇԵՔ

Եթե անչափահասը մուրացկան է, անօթևան կամ սեռական շահագործման /պոռնկության/ ենթարկված անձ, նա **չպետք է** դիտարկվի որպես օրենքը խախտած անձ և ենթարկվի պատասխանատվության:⁹ Եթե Ձեր երկրի ներպետական օրենսդրության համաձայն այդ արարքները հանցագործություն են, ապա ներպետական օրենսդրությունը հակասում է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Այդպիսի անչափահասները հոգածության և պաշտպանության կարիք ունեն: Հանցագործության մեջ մեղավոր են «հաճախորդները», կավատներն ու շահագործողները, և նրանք դատական կարգով պետք է հետապնդվեն, այլ ոչ՝ անչափահասները:

Անչափահասի հետ վարվեք այնպես, ինչպես հոգատարության և պաշտպանության կարիք ունեցող մարդու հետ,

⁹ ՀՀ քրեական օրենսդրությունը չի նախատեսում պատասխանատվություն մուրացկանության, թափառաշրջիկության կամ պոռնկությամբ զբաղվելու համար: Պոռնկությամբ զբաղվելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն, բայց այն երեխաների վրա չի տարածվում: Ավելին ՀՀ քրեական օրենսգրքում 2011թ.-ի մարտի 1-ի օրենքով կատարված փոփոխություններով թրաֆիքինգից/շահագործումից տուժած անձն ազատվում է իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:

կան, եթե հանցագործի դեմ քրեական գործ հարուցելու համար բավարար ապացույցներ կան, ապա գործի քննության ընթացքում անչափահասի հետ վարվեք ինչպես տուժողի հետ: Ամեն դեպքում, անչափահաս տուժողի հետ շփվելիս, հաշվի առեք նրա հոգեկան ու հոգեբանական վիճակը. միաժամանակ եղեք նրբազգաց, հասկացող և կարեկցող:



Նիդերլանդներում կիրառվող անչափահասակների հարցաքննության «Սցենարի մոդել» մեթոդը¹⁰

Նիդերլանդներում արյունապղծության (incestus) և անչափահասների նկատմամբ սեռական բռնության հասարակական քննարկումը 1980-ական թվականներին հանգեցրեց այս հանցագործությունների մասին հաղորդումների քանակի մեծացմանը: Միևնույն ժամանակ միջազգային հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ անչափահասները կկարողանային հուսալի վկաներ լինել դատարանում: Այդ գաղափարի իրագործման հետևանքով անչափահասների հարցաքննությունը դարձավ ոստիկանության աշխատանքի մի մասը՝ բայց և այնպես, միայն ոստիկանի կողմից:

¹⁰ *K.M.C. Dekens (2005), Dutch Police Academy.*

մից հատուկ մասնագիտական վերապատրաստում անցնելուց հետո: Նիդերլանդներում ոստիկանության սպան պետք է ունենա հավաստագիր, որն իրավունք է տալիս հարցաքննել մինչև 13 տարեկան անչափահասներին, իսկ անհրաժեշտ հավաստագիրը ստանալու համար նա պետք է անցնի 14-ամսյա վերապատրաստում:

Հարցաքննությունը տեղի է ունենում հատուկ սենյակներում, որոնք հարմար են անչափահասների հարցաքննությունն անցկացնելու համար: Հարցաքննությունը տեսագրվում է՝ անչափահասի կրկնակի հարցաքննությունից խուսափելու նպատակով:

Հոլանդական իրավական համակարգում անչափահասը չի մասնակցում դատաքննությանը: Վկային հարցաքննում են ոստիկանությունում և, հիմնվելով այն բանի վրա, որ ցուցմունքները ստացվել են ամենավստահելի, հավատներշնչող պայմաններում, դատավարության մյուս մասնակիցները պետք է վստահեն դրանց: Հարցաքննության տեսագրությունը դատավորն ընդունում է որպես ապացույց. տեսաժապավենը կարող է ցուցադրվել դատախազին, փաստաբանին կամ դատավարության այլ մասնակիցներին:

Մի քանի տարի շարունակ հոլանդական ոստիկանությունը մշակում էր անչափահասների հարցաքննության մեթոդ, որը նկարագրված է «Սցենարի մոդել»-ում: Սա 4-ից մինչև 12 տարեկան անչափահասների ցուցմունքները ստանալու հատուկ մեթոդ է, և որի օգտագործումը Նիդերլանդ-

ներում համարվում է «լավագույն փորձ»: Այդ մեթոդը բավականին բարդ է հարցաքննողի համար և պահանջում է գործնական նախապատրաստություն ու տեսական գիտելիքներ:

«Սցենարի մոդելը» հարցաքննողին թույլ է տալիս ելնելով իրավիճակից անհատական մոտեցում ցուցաբերել տուժողի/վկայի նկատմամբ: Ցանկացած հարցաքննություն կախված է իրադրությունից, սակայն այն պետք է կանոնակարգված լինի և համապատասխանի հարցաքննության անցկացման պահանջներին: Լավագույն արդյունքը ստանալու համար հարցաքննողը հարցաքննության ընթացքում կարող է անցնել այլ սցենարին:

Կատարյալ իրադրությունը ներկայացված է A սցենարում: Տվյալ սցենարում անչափահաս տուժողը/վկան առանց կաշկանդվելու պատմում է պատահածի մասին, և հարցաքննողը կարող է փաստերի վրա հիմնված հարցեր տալ՝ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու նպատակով:

Եթե ինքնական պատմելը չի ստացվում, հարցաքննողն անցնում է B սցենարին և անուղղակի հարցերի միջոցով օգնում անչափահասին՝ պատմել պատահածի մասին, կամ տեղեկություն ստանալու նպատակով օգտագործում է նկարներ և տեսողական պատկերներ: Եթե այս ամենից հետո անչափահասը սկսում է պատմել, հարցաքննողը կրկին վերադառնում է A սցենարին:

Եթե անուղղակի եղանակը արդյունք չի տալիս, հարցաքննողը դիմում է C սցենարին, և ինքն է ներկայացնում որոշակի հիմնավորումներ: Եթե անչափահասը հաստատում է դրանք, հարցաքննողը կրկին վերադառնում է A սցենարին և խնդրում ավելի մանրամասն տեղեկություններ տալ: Եթե անչափահասը հերքում է հայտնած պնդումների ճշմարտացիությունը, հարցաքննությունը համարվում է ավարտված: Հարցաքննությունը կարող է տևել 1,5 ժամ:

«Սցենարի մոդելը» կազմված է երեք մասից՝ ներածությունից, հիմնական մասից, որը քրեական գործով պայմանավորված հարցերի ամբողջությունն է, և ամփոփիչ մասից: Հիմնական սկզբունքներն են.

- հարցաքննությունը պետք է հարմարեցված լինի անչափահասին,
- հարցաքննության ընթացքում պետք է ստանալ տուժողի/վկայի ցուցմունքները,
- հարցաքննության ընթացքում ստացված տեղեկությունը պետք է արժանահավատ լինի:

Հարցաքննությունը անչափահասին հարմարեցնելու համար՝ հարցաքննողն իր ուշադրությունը պետք է կենտրոնացնի նրա հետ կոնտակտ ու փոխըմբռնում հաստատելու վրա: Հարցաքննողը պետք է բացատրի անչափահասին, թե ինչ է կատարվելու և ստանա նրա համաձայնությունը, աշխատի չկիրառել հարկադրանքի միջոցներ:

Տուժողի/վկայի ցուցմունքները ստանալու համար հարցաքննողը պետք է հարցեր շարադրի կոնկրետ իրադարձությունների և զուգընթաց բոլոր հանգամանքների վերաբերյալ: Նա պետք է ենթադրի նաև այլընտրանքային հնարավորությունները և այլ կասկածյալների առկայությունը: Արժանահավատ տեղեկություն ստանալու համար հարցաքննողը պետք է վստահ լինի, որ անչափահասը լիովին ընկալում է տրվող հարցերը: Անչափահասը պետք է սեփական կամքով և առանց ճնշման ու հարկադրանքի շարադրի ցանկացած տեղեկություն: Հարցաքննողը օգտագործում է սցենարի մոդելի տեխնիկան: Նա պետք է հավաստիանա, որ տեղեկությունը ճշմարիտ է, և չպետք է ազդեցություն գործի անչափահասի պատասխանների վրա: Հարցաքննողի խնդիրն է օգնել անչափահասին ձերբազատվել կաշկանդվածությունից և պատմել իր պատմությունը, որը կազմված է փաստերի վրա հիմնված տեղեկություններից: Այդ նպատակին հասնելու համար հարցաքննողը պետք է նվազագույնի հասցնի իր ազդեցությունը անչափահասի վրա:

«Սցենարի մոդել» /օրինակելի նմուշը/

1. Ներածություն

Բացատրեք հարցաքննության նշանակությունն ու նպատակը:

Անչափահասին ընտրելու հնարավորություն տվեք. հարցաքննությունը սկսել անմիջապես, թե՛ սկզբում խաղալ և զրուցել նրա հետ:

Անչափահասի հետ կոնտակտ և փոխընթացում հաստատել:

2. Հիմնական մաս

բաց հարցեր

Ձերբազատում կաշկանդվածությունից

Նպաստում կատարվածի վերհիշմանը

Բացատրեք հիմնական կանոնները

Անկաշկանդ հիշողություններ

- բաց հարցեր,
- ստուգողական հարցեր/տեղեկության աղբյուրի ստուգում,

• սկզբում հարցուփորձ արեք գործողությունների, այնուհետև՝ հանգամանքների մասին,

• զուգընթաց հանգամանքներ և առանձնահատուկ դրվագներ,

• այլընտրանքային առաջարկներ / կասկածյալներ:

Եթե չկա ձերբազատում կաշկանդվածությունից, ապա անցեք **B** սցենարին՝

Անուղղակի հարցեր

Նկար

Եթե չկա ձերբազատում կաշկանդվածությունից, ապա անցեք **C** սցենարին՝

Ներկայացրեք տեղեկատվություն


3. Անփոփոխ մաս

Կա՞ն այլ կասկածյալներ:

Կա՞ն հարցեր կամ լրացումներ:

Հաճոյախոսե՞ք անչափահասին:

Հանգիստ/ խաղ:



Անչափահասների մասնակցությամբ կատարվող որոշ քննչական գործողությունների առանձնահատկությունները ՀՀ իրավակիրառ պրակտիկայում

ՀՀ գործող քր. դատ. օր.-ը չի նախատեսում անչափահասների այսպես կոչված «միջնորդավորված առերեսման» ինստիտուտը: Սակայն գործնականում, եթե թրաֆիքինգի անչափահաս տուժողներ են, ովքեր ենթարկվել են սեռական շահագործման, ապա նրանց պաշտպանության վերաբերյալ միջազգային չափանիշները պահանջում են չենթարկել կրկնակի վիկտիմիզացիայի: Այս տեսանկյունից, ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ձևավորվել է անչափահասների միջնորդավորված առերեսման հնարավորության կիրա-

ռումը, որի դեպքում, եթե անչափահաս տուժողի և մեղադրյալի ցուցմունքների միջև ծագում են էական հակասություններ, ապա վարույթն իրականացնող մարմինը կատարում է ոչ թե է ՀՀ քր. դատ. օր.-ի 216 հոդվածով նախատեսված առերեսում, այլ իրականացնում է տուժողի հարցաքննության տեսագրում, որից հետո անչափահաս տուժողի հարցաքննության ընթացքում իրականացված տեսագրման սկավառակը ծանոթացման համար ներկայացվում է գործով մեղադրյալին, ով լրացուցիչ ցուցմունքում կարողանում է արտահայտել իր դիրքորոշումը անչափահաս տուժողի ցուցմունքի վերաբերյալ:

Նշված պրակտիկան առաջին անգամ կիրառվել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում քննվող թիվ 12130008 քրեական գործով, որի նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ մեղադրյալը Ս. Ու.-ն 2008թ.-ի հուլիս ամսին, դպրոցի չգործող կաթսայատանը, նույն դպրոցի աշակերտ՝ տասնչորս տարին չլրացած Ա.Ժ.-ի կամքին հակառակ, բռնություն գործադրելով, համասեռամոլության եղանակով սեքսուալ բնույթի գործողություններ է կատարել նրա նկատմամբ: Գործով տուժող՝ անչափահաս, 13-ամյա Ա.Ժ.-ն ցուցմունքում նշել է, որ 2008թ. հուլիս ամսին, ցերեկը, դպրոցի բակում իրեն է մոտեցել Ս.Ու.-ը և ասել է, որ իր հետ միասին գնան չգործող կաթսայատուն՝ ինչ-որ երկաթ դուրս բերելու համար: Հավատալով Ս.Ու.-ին, ինքը նրա հետ միասին գնացել է կաթսայատուն: Երբ Ու.-ի ասե-

լով կանգնել է կաթսայատան վերջնամասում, վերջինս կանգնել է իր հետևը և պահանջել է, որպեսզի իջեցնի անդրավարտիքը: Ինքը մերժել է Ու.-ի պահանջնը և ասել է, որ իրեն բաց թողնի: Ս.Ու.-ն, չլսելով իրեն, ստիպողաբար իջեցրել է իր անդրավարտիքը, իսկ այնուհետև՝ ինքն՝ իրենը: Ինքը դարձյալ Ու.-ից պահանջել է բաց թողնել իրեն, ոչինչ չանել, փախնելու նպատակով ձեռքով հարվածել է նրա փորին, սակայն չի կարողացել փախնել, քանի որ Ու.-ն երկու ձեռքով իրեն բռնել և մեջքով դեպի իր կողմ է շրջել: Այնուհետև Ու.-ն մի ձեռքով բռնելով իր մի ձեռքը այն սեղմել է փորին ու ոտքերը գետնից կտրելով ստիպել է առաջ կռահալ: Կիրառելով բռնություն Ա.ժ.-ի նկատմամբ՝ Ու.-ն իրականացրել է սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, որից հետո հանգստանալու հոգոց է հանել, ասել է «օխ հավես էր» ու սպառնացել է, որ եթե կատարվածի մասին որևէ մեկին պատմի՝ իր թևերը կկտորի և հեռացել է:

Անչափահաս տուժողը ցուցմունքը պնդել է նաև լրացուցիչ հարցաքննության ժամանակ, որի վերաբերյալ կազմված արձանագրությունը և հարցաքննության ընթացքում իրականացված տեսագրման սկավառակը ծանոթացման համար ներկայացվել են գործով մեղադրյալ Ս.Ու.-ին, որոնց ծանոթանալուց հետո՝ լրացուցիչ ցուցմունքում վերջինս արտահայտել է իր դիրքորոշումը Ա.ժ.-ի ցուցմունքի վերաբերյալ՝ հերքել է իր կողմից վերջինիս նկատմամբ արվանդության եղանակով սեռական ակտ կատարելու փաս-

տը: Ա.Ժ.-ն ծանոթանալով մեղադրյալ Ս.Ու.-ի լրացուցիչ ցուցմունքի հետ՝ դրանում բերված պատճառաբանությունների հետ, որպես տուժողի իր հաջորդ լրացուցիչ ցուցմունքում, որի ընթացքում նույնպես իրականացվել է տեսագրում, հերքելով Ս.Ու.-ի պատճառաբանությունները պնդել է իր ցուցմունքները:

Առաջադրված մեղադրանքում Ս.Ու.-ն իրեն մեղավոր չի ճանաչել, նշելով, որ մեղադրանքի մեջ նշված հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը, ինքը անչափահաս Ա.Ժ.-ի նկատմամբ սեռական ակտ չի կատարել և վերջինս իրեն զրպարտում է:

Սույն քրեական գործով, թեև տուժողի և մեղադրյալի ցուցմունքների միջև առկա է եղել էական հակասություններ, ՀՀ քր. դատ. օր.-ի 216 հոդվածի կարգով առերեսում չի իրականացվել: Քրեական գործով մեղադրյալի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել մեղադրյալ Ս.Ու.-ի և տուժող Ա.Ժ.-ի միջև առերես հարցաքննություն կատարելու վերաբերյալ, նշելով, որ նրանց ցուցմունքների մեջ կան էական հակասություններ և նրանց միջև մինչև օրս առերես հարցաքննություն չի կատարվել: Պաշտպանը իր միջնորդության մեջ հիշատակել է ՀՀ քր. դատ. օր.-ի 216 հոդ. 1-ին և 65 հոդ. 1-ին մասերի պահանջները, համաձայն որոնց քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և այլ անձի միջև, և որ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է մեղադր-

յալին հնարավորություն ընձեռել օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը: Պաշտպանն իր միջնորդությունը հիմնավորել է նաև 33 քր. դատ. օր-ի 65 հոդ. 2-րդ մասի 6-րդ կետի պահանջով, համաձայն որի մեղադրյալը իրավունք ունի առերես հարցաքննվել իր դեմ վկայած անձանց հետ և ՄԻԵԿ 6-րդ հոդվածի դ/ կետի պահանջով, այն է՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին, միջնորդել է իր պաշտպանյալի հետ առերես հարցաքննել անչափահաս տուժողին:

Վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել միջնորդությունն ամբողջությամբ մերժելու մասին, հետևյալ պատճառաբանությամբ. «Եվրոպական դատարանը նախադեպային վճռով պարզաբանել է, որ մեղադրյալի և այլ անձի միջև առերեսունը չի կարող միայն անմիջականորեն կատարվել, որ առանձին դեպքերում, անհրաժեշտությունից ելնելով քննչական այդ գործողությունը կարող է կատարվել նաև միջնորդավորված ձևով:

Այսպես՝ Ս.Ն. ընդդեմ Շվեյցարիայի գործով (2002թ. հուլիսի 2) Եվրոպական դատարանի վճռով արձանագրված է. «Չի կարելի պնդել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը պահանջում է, որպեսզի բոլոր դեպքերում հարցերը մեղադրյալի և պաշտպանի կողմից տրվեն

անմիջականորեն»:¹¹ Կոնվենցիայով երաշխավորված՝ Ձեր պաշտպանյալ՝ գործով մեղադրյալի՝ իր դեմ վկայություն տված անձին հարցեր տալու իր իրավունքը քրեական գործով 13.03.09թ. կատարված քննչական գործողություններով ապահովված է և Ձեր պահանջն ըստ էության կատարվել է, քանի Դուք ու Ձեր պաշտպանյալ մեղադրյալը արդեն իսկ օգտվել եք տուժողին հարցաքննելու, նրան հարցեր տալու իրավունքից՝ Ձեզ և Ս.Ու.-ին ծանոթացմանն է ներկայացվել Ա.Ժ.-ի 13.03.2009թ. որպես տուժողի լրացուցիչ հարցաքննության արձանագրությունը և հարցաքննության ընթացքում իրականացված տեսագրման սկավառակը, որոնց ծանոթանալուց հետո լրացուցիչ ցուցմուքում Ս.Ու.-ն արտահայտել է իր դիրքորոշումը Ա.Ժ.-ի ցուցմունքի վերաբերյալ: Միաժամանակ Ս.Ու.-ին և Ձեզ հնարավորություն է ընձեռնվել հարցեր ուղղել Ա.Ժ.-ին, որից օգտվելով Ս.Ու.-ն - հարց է ուղղել Ա.Ժ.-ին և ստացել իր հարցի պատասխանը:

Ինչպես նկատեցի՞նք, վարույթն իրականացնող մարմինը հղում է կատարել Եվրոպական դատարանի Ս.Ն. ընդդեմ Շվեյցարիայի գործով կայացված որոշման վրա, դրանով իսկ ձևավորելով ՀՀ-ում անչափահասների առերեսման առանձնահատուկ մոտեցում:

Այդ որոշման մեջ դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Չի կարելի պնդել, որ Կոնվենցիայի 6-րդ -

¹¹ Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред. – сост. Ю.Ю. Берестнев, М.В. Виноградов. Перевод с англ. В.А. Власихина. - М., 2004.- С. 118.

հողվածի 3-րդ կետի «դ» ենթակետը պահանջում է, որպեսզի բոլոր դեպքերում հարցերը տրվեն անմիջականորեն մեղադրյալի և պաշտպանի կողմից»: Այս գործում արտահայտված իրավական դիրքորոշումը ճիշտ գնահատելու համար պետք է հաշվի առնել գործի հանգամանքները: Այսպես, դիմողը անչափահաս Մ.-ի դեմ սեռական հանցագործության մեղադրանքով դատապարտվել է 8 ամիս ազատազրկման: Սույն գործով մեղադրական դատավճռի հիմքում ընկած է եղել առավելապես Մ.-ի ցուցմունքները և դրանց տեսա- և ձայնագրությունները:

Մ-ին իրենց տանը հարցաքննել է ոստիկանը: Դիմողի փաստաբանը համաձայնել է չմասնակցել հարցաքննությանը, քանի որ Մ.-ի փաստաբանը նույնպես չէր կարող մասնակցել այդ գործողությանը: Սակայն դիմողի փաստաբանը նախօրոք ձևակերպել է իր հարցերը, որոնք ոստիկանի կողմից ներկայացվել են Մ.-ին: Հետագայում փաստաբանը հարցաքննության ձայնագրությունների հիման վրա հաստատել է, որ հարցաքննության ընթացքում շոշափվել են այն հարցերը, որոնք ինքը կցանկանար ներկայացնել:

Մ-ն դատարանում ցուցմունք չի տվել: Դատական քննության ընթացքում վերարտադրվել են Մ.-ի առաջին հարցաքննության ձայնագրությունները և արձանագրությունները: Դիմողը դատաքննության ընթացքում չի միջնորդել որպեսզի Մ-ն անձամբ մասնակցի դատավարությանը: Դատարանը նշել է, որ այս գործով կարելի է ընդունել դիմո-

դի պնդումն այն մասին, որ նա ձեռնպահ է մնացել Մ-ին դատարան կանչելու և անձամբ նրան հարցաքննելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելուց, քանի որ այդպիսի միջնորդությունը կմերժվեր: Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ ոստիկանության աշխատակցի հետ Մ-ի երկրորդ զրույցը տեղի է ունեցել դիմողի փաստաբանի միջնորդությամբ, ով համաձայնվել է չմասնակցել հարցաքննությանը և այդ կապակցությամբ առարկություն չի ունեցել: Նա չի միջնորդել որպեսզի հարցաքննությունը հետաձգվի կամ էլ տեսագրվի, մինչդեռ պաշտպանը նման հնարավորություն ունեցել է: Ավելին փաստաբանը հնարավորություն է ունեցել ոստիկանի միջոցով տուժողին տալ հարցերը և բավարարված է եղել հարցերի պատասխաններով: Սույն գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումն չի արձանագրել:

Արթուր. Ղամբարյան

իրավաբան, ի.գ.թ., դոցենտ

Եթե խախտվել են երեխայի իրավունքները,

զանգահարե՛ք եւ հայտնե՛ք

080 080 801 կամ 080 061 111

հեռախոսահամարներով:

Զանգահարելն անվճար է:

